

շուտով ետ քաշուիլ, վասնզի գիշերով կանանոցի դռան մը բացվիլը եւ նոյն միջոցին երիտասարդի մը հոն ներկա գտնուիլը նաեւ յանցանք կրնար համարուել. բայց շարժմունքը ուշադրութիւն արթնցնել էր, եւ աւելի խոհեմութիւն սեպելով՝ անտեսանելի մնալու համար անշարժ կենալը վերադասեց. կիսաբաց դռնէն տեսաւ, որ ելաւ ճերմակներ հագած փոքրիկ աղջիկ մը հագիւ տասնմէկ-տասներկու տարեկան. մէկէն ճանչեց Շէյխին աղջիկը՝ Էսմա: Կը յուսար, որ զինք առանց տեսնելու կ'անցնի, բայց նա սուր աչքերով ամէն կողմ զննելով եւ ուշ դնելով առաջ կ'ուզար, երբ շատրուանին մօտեցաւ, կանգ առաւ, լաւ մը դիտեց եւ այդ մթութեան սովոր վայրենի աչերը նշմարեցին թէ ով էր արձանը, որ ծառի մը կռթնած նստեր էր. շտկուեցաւ դէպի նա. Գրիգոր խոհեմութիւն սեպեց քուն ձեւանալ, իսկ նա եկաւ վայրկեան մը իւր աչքերն ուղղեալ Գրիգորի, ծռեցաւ եւ սկսաւ այնպէս մօտեն աչքերուն նայիլ, որ իւր շունչը երիտասարդին չափազանց մօտենալով պարտաւորեցաւ գլուխը քաշել եւ աչքերը բոլորովին բանալ:

— Դուն արթուն ես եւ քո՞ւն կը ձեւանայիր,— ըսաւ աղջիկը կամաց ձայնով:

— Լուացուելու եկեր էի, վայրկեան մը նստայ, քունս տարեր է, երթամ տեղս պառկիմ,— պատասխանեց Գրիգոր եւ ուզեց ելնել:

— Մի՛, նստե՛, խօսի՛նք, ես քեզի համար եկայ,— եւ այս ըսելով ձեռքն ուսին վրայ դրաւ:

— Ինչպե՞ս, ինձի՞ համար, գնա տեղդ, դու տիրուհի մ'ես, իսկ ես խեղճ գերի մը. քեզի չի վայլեր կանանոցէն դուրս ելնել այս ժամանակ:

— Բայց դու ել դերի չես, ազատ ես, հայրս այնպէս ըսաւ մօրս, ուրիշ բան մ'ել ըսաւ...

— Ես հետաքրքիր չեմ իմանալու. թո՛ղ. տիրուհի, երթամ. եւ կը շակուեր ելնելու:

Իսկ աղջիկը փոխանակ ետ քաշուելու երիտասարդին լուրջ խօսքերէն, ցատկեց եւ ծանկերուն վրայ նստաւ, աջը վզին վրայ ձգելով: Այս լրբութեան վրայ զայրոյթ մէկ կողմէն՝ երկիւղ միւսէն, վերջին այլալուծեան հասուցին զգրիգոր, ձայն հանել՝ խիստ խօսիլ կը վախեր, վասնզի եթէ մէկը վրայ հասներ եւ այն դիրքին մէջ զինք տեսներ՝ իր վիճակը շատ վտանգաւոր կը լիներ, ուստի քաղցրութեամբ խօսիլն ընտրելով.